« 16 » մայիս 2024թ. No 2716 - Ա

«ԴԵՂՈՐԱՅՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2024թ.-ից կրկնողաբար, ք. Երևան (ԵՊԲՀ Հետբուհական և շարունակական կրթության կենտրոնի անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի ամբիոն՝ «Էրեբունի» ԲԿ, Տիտոգրադյան փ. 14)

«Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ

- Թիրախային լսարան՝ բուժքույրեր, մանկաբարձուհիներ
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 1-30 հոգի
- մասնակիցներին շնորհել ՇՄԶ 6 տեսական և 33 գործնական կրեդիտ.

դասընթացավար Հասմիկ Քոչարյանին՝ ՇՄԶ 6 տեսական և 33 գործնական կրեդիտ

- Կոնտակտ 010583101

Շաբաթ 1	
Օր 1	
10:00-11:30	Նախաթեստ **Դասախոսություն** Դեղերի դուրսգրումը և բաժանումը: Տարբեր դեղորայքային միջոցների պահպանման պայմանները: Փաստաթղթավորումը: Դեղորայքի ներմուծման հիմնական ուղիները: Դեղորայքի ներմուծման <<6 ճիշտերը>>: Պացիենտի անվտանգության կանոնակարգերը: Դեղորայքի սխալ ընդունման ինդեքս
11:30-12:00	Ընդմիջում
12:00-14:30	**Գործնական աշխատանք** Ինհալացիոն ճանապարհ: Լրացուցիչ թթվածնի մատակարարման ձևերը, դրանց համեմատական բնութագիրը: Թթվածնի հետ աշխատելիս անվտանգության կանոնները: Ինհալատորների, նեբուլայզերների կիրառման տեխնիկան տարբեր տարիքային խմբերում: Արհեստական օդափոխության սարքերով դեղորայքի ներմուծման տեխնիկան
Օր 2	
10:00-12:00	**Գործնական աշխատանք** Արտաքին եղանակ. դեղորայքի կիրառումը մաշկին և լորձաթաղանթներին: Առանձնահատկությունները կորոնար անոթների հիվանդությամբ տառապող բուժառուների մոտ
12:00-12:30	Ընդմիջում
12:30-14:30	**Գործնական աշխատանք** Տաք և սառը թրջոցների, ջեռակի, սառցեպարկերի կիրառումը:

	Դեղորայքի կիրառումը աչքի և ականջների քսուքի և կաթիլների ձևով
Օր 3	
10:00-12:00	**Գործնական աշխատանք** Դեղորայքի ներմուծման ենթալեզվային, տրանսբուկալ, պերօրալ, ուղիղաղիքային և հեշտոցային ուղիներ: Ցուցումները, հակացուցումները, տեխնիկան, բարդությունները, դրանց կանխումը և կառավարումը: Կիրառման առավելությունները և թերությունները մանկաբուժական պրակտիկայում, կրիտիկական իրավիճակներում
12:00-12:30	Ընդմիջում
12:30-14:30	**Գործնական աշխատանք** Դեղորայքի տանելիության փորձերը: Ցուցումները, տեխնիկան, բարդությունները, դրանց կանխումը և կառավարումը
Օր 4	
10:00-11:30	**Դասախոսություն** Ներարկիչների և ասեղների տեսակները: Դրանց կիրառական նշանակությունը: Դեղաչափի հաշվարկը
11:30-12:00	Ընդմիջում
12:00-14:00	**Գործնական աշխատանք** Դեղերի նոսրացումը և լուծումը, հավաքումը ամպուլայից և սրվակից: Ներմաշկային, ենթամաշկային և միջմկանային ներարկումներ: Ցուցումները, հակացուցումները, տեխնիկան, բարդությունները, դրանց կանխումը և կառավարումը
Օր 5	
10:00-12:00	**Գործնական աշխատանք** Ներերակային շիթային ներարկում: Ցուցումները, տեխնիկան, բարդությունները, դրանց կանխումը և կառավարումը: Երակի պունկցիայի առանձնահատկությունները դժվար հայտնաբերելի երակների դեպքում, լրացուցիչ տեխնիկական միջոցների կիրառումը
12:00-12:30	Ընդմիջում
12:30-14.00	**Գործնական աշխատանք** Ներերակային կաթիլային ներարկում: Կաթիլային համակարգի լիցքավորման տեխնիկան, նիշավորումը: Պերիֆերիկ երակային կաթետերների տեսակները և չափերը: Կաթետերի ընտրության վրա ազդող գործոնները: Պերիֆերիկ երակի կաթետերիզացիա: Ցուցումները, տեխնիկան, բարդությունները, դրանց կանխումը և կառավարումը: Պերիֆերիկ երակային կաթետերի, համակարգի և դեղորայքի պարկերի խնամքը: Առանձնահատկությունները արյան բաղադրիչների, պարէնտերալ սնուցման, տարբեր դեղորայքների դեպքում: Պերֆուզորների, ինֆուզամատների կիրառման տեխնիկան: Կաթետերի հեռացումը
Շաբաթ 2	
Օր 1	
10:00-11:30	**Դասախոսություն** Կենտրոնական երակային կաթետերների /ԿԵԿ/ տեղադրում**:** Բուժքրոջ դերը ԿԵԿ-ների տեղադրման գործընթացում
11:30-12:00	Ընդմիջում
12:00-14.30	**Գործնական աշխատանք** Կենտրոնական երակային կաթետերով պացիենտների խնամքը. ձեռքերի հիգիենան, ներերակային կաթիլային համակարգերի ամենօրյա խնամքը և փոխումը, ինֆուզիոն հեղուկների պարկերի փոխումը, ԿԵԿ-ների և մաշկի խնամքի վիրակապական նյութերի տեսակները, կիրառվող հականեխիչները, ԿԵԿ-ների

	վիրակապման ռեժիմը և տեխնիկան, պացիենտների կրթումը: ԿԵԿ-ների բարդությունները, դրանց կանխումը և կառավարումը
Օր 2	
10:00-12:00	**Գործնական աշխատանք** Միզապարկի կաթետերիզացիա: Միզային կաթետերների տեսակները և չափերը: Միզապարկի կաթետերիզացիա արական և իգական սեռի պացիենտների մոտ: Ցուցումները, տեխնիկան, բարդությունները, դրանց կանխումը և կառավարումը
12:00-12:30	Ընդմիջում
12:30-14:00	**Գործնական աշխատանք** Միզային կաթետերով պացիենտների խնամքը. ամենօրյա խնամք, միզահավաք պարկերի դատարկում, կաթետերի հեռացում, հետկաթետերային անմիզապահության դեպքում բուժառուի խնամքը: Դեղորայքի և իրիգացիոն հեղուկների ներմուծումը միզային կաթետերով: Բարդությունները, դրանց կանխումը և կառավարումը
Օր 3	
10:00-12:00	**Գործնական աշխատանք** Նազոգաստրալ և օրոգաստրալ զոնդերի տեղադրում: Ցուցումները, տեխնիկան, բարդությունները, դրանց կանխումը և կառավարումը
12:00-12:30	Ընդմիջում
12:30-14:30	**Գործնական աշխատանք** Նազոգաստրալ զոնդով պացիենտների խնամքը. pH-մոնիթորինգ, լվացում, ամրացում, քթանցքի և այտի խնամք: Սննդային խառնուրդների և դեղորայքային միջոցների ներմուծումը ն/գ զոնդով, պացիենտի դիրքավորումը: Զոնդի անանցանելիության պատճառները, դրանց վերացման տեխնիկան և կիրառվող լուծույթները: Զոնդի հեռացումը
Օր 4	
10:00-11:30	**Դասախոսություն** Արյան նմուշառում: Գործողության նշանակությունը: Նմուշի տեղափոխման, պահպանման պայմանները: Փաստաթղթավարումը: Արյան նմուշառման ընթացքում պայմանների և տեխնիկական սխալների ազդեցությունը արդյունքների ճշգրտության վրա: Սրվակների հերթականության պահանջը
11:30-12:00	Ընդմիջում
12:00-14.30	**Գործնական աշխատանք** Արյան նմուշառում պերիֆերիկ երակից, զարկերակից, զարկերակային, պերիֆերիկ և կենտրոնական երակային կաթետերներից: Տեխնիկան, բարդությունները, դրանց կանխարգելումը և կառավարումը
Օր 5	
10:00-12:00	**Գործնական աշխատանք** Ներոսկրային ներարկման տեխնիկան: Առանձնահատկությունները կրիտիկական իրավիճակներում: Բարդությունները, դրանց կանխարգելումը և բուժումը
12:00-12:30	Ընդմիջում
12:30-14:30	**Գործնական աշխատանք** Մասնավոր դեպքերի քննարկում, գործնական հմտությունների գնահատում: Հետթեստ

Դասընթացավար՝ Հասմիկ Քոչարյան: